



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union

PROMIG Promoting
Migration
Studies in
Higher Education

Հրատարակությունն իրականացվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ
«Erasmus+ PROMIG 573554-EPP-1-2016-1-GE-EPPKA2-CBHE-JP» ծրագրի շրջանակներում:

The publication was funded by the European Union in the framework of the
Erasmus+ PROMIG 573554-EPP-1-2016-1-GE-EPPKA2-CBHE-JP project.



ԵՄ կողմից ֆինանսավորված նախագծերն ու Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետում իրականացվող միգրացիոն հետազոտությունները

Հետխորհրդային նորանկախ պետությունները բախվեցին մի շարք հիմնախնդիրների, որոնցից էր արտագաղթը: Ստեղծված շուկայական պայմաններում արտագաղթը դիտարկվել է որպես առկա տնտեսական խնդիրները լուծելու, կրթությունը շարունակելու, արտերկրում ընտանիք կազմելու հնարավորություն: Միգրացիոն գործընթացները մի կողմից հնարավորություն էին, մյուս կողմից՝ սպառնալիք ինչպես հասարակական կյանքի, ժողովրդագրության, տնտեսության, քաղաքականության, այնպես էլ անվտանգության առումով: Համապատասխանաբար, այլ երկրներում առկա փորձն ու մեթոդաբանությունը դարձան ուսումնասիրությունների և համեմատության առարկա՝ այն կիրառելու ազգային մակարդակում միգրացիոն քաղաքականության մշակման, միգրացիոն գործընթացների կառավարման առումով: Գիտահետազոտական մակարդակում միգրացիոն հետազոտությունները նույնպես դարձան կարևոր ուղղություններից մեկը:

Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետն այն գիտահետազոտական կենտրոններից է, որը մշտապես զարգացրել և ամրապնդել է միգրացիոն հետազոտությունների իր կարողությունները, փորձն ու ներուժը: Միգրացիոն հետազոտությունների կազմակերպման և իրականացման ինստիտուցիոնալ մոտեցումները ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում ի սկզբանե ներքին գիտահետազոտական գործունեության ռազմավարական նպատակներից էին, սակայն էապես զարգացվեցին սոցիոլոգիայի ֆակուլտետի՝ ԵՄ աջակցությամբ իրականացված գործընկերային ծրագրերի շնորհիվ, որոնք նպաստեցին նաև ֆակուլտետում ներքոհիշյալ մագիստրոսական ծրագրի զարգացմանը, կրթական պլանների կատարելագործմանը, ռեսուրսների ձեռքբերմանը, կրթական մոբիլության իրականացմանը, ԵՄ բուհերի հետ արժեքավոր փորձի փոխանակմանը:

The EU funded projects and Migration Studies at the Faculty of Sociology, Yerevan State University

The post-Soviet independent states found themselves in a relatively free and liberal space with new problems and opportunities. For citizens of the former superpower, migration became one of the solutions to their search for jobs, international education, marriage, and so on. Accordingly, international experience in the wider fields of policy-making and regulation of migratory flows has been used to make political decisions and to found state and non-state bodies that tackle migration issues. In the field of academia, establishment of migration resource centers and teaching of migration studies and courses has been made a priority. The Faculty of Sociology at Yerevan State University is among the research institutions in the region of the South Caucasus with strong teaching and research components that engage in migration studies and apply an interdisciplinary approach to research and policy analysis in the wider field of migration. Primarily managed in the framework of local initiatives, institutional design and development of migration studies at the YSU Faculty of Sociology benefitted significantly from participation in EU-funded joint projects, which helped the faculty develop its infrastructure, upgrade teaching courses and approve research methodology, bridge the EU and EU neighborhood academia, teaching curricula and research efforts in the field of migration studies, assuring the academic mobility of students and faculty.



ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից ԵՄ աջակցությամբ իրականացված ծրագրերը միգրացիոն հետազոտությունների ոլորտում

«TEMPUS IV UNIMIG» (Միգրացիան և բարձրագույն կրթությունը. կարողությունների և հնարավորությունների զարգացումը, 2011-2015)

«TEMPUS IV UNIMIG» (Միգրացիան և բարձրագույն կրթությունը. կարողությունների և հնարավորությունների զարգացումը, 2011-2015) համագործակցային ծրագրի նպատակն էր գործընկեր համալսարաններում միգրացիոն հետազոտություններին նվիրված մագիստրոսական կրթական ծրագրերի մշակումն ու ներդրումը, ուսանողների և դասախոսների համագործակցությունը, համապատասխան կրթական ծրագրերի վերանայումն ու ԵՄ համալսարաններում առկա արդյունավետ փորձի օգտագործումը սույն ծրագրում ներառված մյուս բուհերի, ինչպես նաև ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից: Այս և այլ նպատակների իրականացումը կազմակերպվել է համատեղ աշխատաժողովների, հրավիրյալ դասախոսների աշխատանքի, ուսումնական ծրագրերի համատեղ քննարկման, վերամշակման և այլ միջոցառումների ձևաչափով:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներից էին.

1. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 6 համալսարաններում միգրացիոն հետազոտություններին նվիրված մագիստրոսական ծրագրերի մշակումն ու հավատարմագրումը՝ Բոլոնիայի համակարգի պահանջներին համապատասխան: ԵՄ և տարածաշրջանային գործընկեր համալսարանների համատեղ ուժերով մշակված կրթական ծրագրերը համապատասխանեցվել են յուրաքանչյուր բուհի կրթական նպատակներին և պահանջներին: Այդ կրթական ծրագրերը նաև ապահովեցին հետագա համագործակցությունը գործընկեր բուհերի և այլ մասնագիտական կառույցների միջև: Բացի այդ՝ իրականացվեց մասնագիտական համագործակցություն միգրացիոն գործընթացների առումով ավանդաբար «ընդունող» և «ուղարկող» երկրների մասնագիտական կառույցների ներկայացուցիչների միջև:



EU-funded projects on Migration Studies implemented by the Faculty of Sociology, Yerevan State University

TEMPUS IV UNIMIG (Migration and Higher Education: Developing Skills and Capacity, 2011-2015)

The aim of the TEMPUS IV UNIMIG (Migration and Higher Education: Developing Skills and Capacity, 2011-2015) was the development of graduate programs in migration studies at partner universities through joint activities, such as academic mobility of students and faculty, development and mutual review of curricula and syllabi during workshops and meetings, summer schools for students where faculty from partner universities delivered classes to partner university students, study visits to local organizations dealing with migration issues and created for/by migrants, etc.

The project pursued the following specific objectives:

1. To develop, accredit and implement a basic curriculum for a Master Program in Migration Studies with a regional dimension in line with the Bologna requirements at 6 universities in Armenia, Azerbaijan and Georgia. The curriculum, developed jointly by EU partners and partner country institutions, was adapted to each partner country/ university's specific needs. The joint curriculum served as a strong foundation for further cooperation among the partner institutions (universities and non-university partners). The cooperation between traditional source and destination countries of migration shaped the contents of the curriculum in migration studies.
2. To found sustainable structures, including national Migration Competence Centers (as integrated university units at the Tbilisi State University and the Yerevan State Univer-

2. Թբիլիսիի և Երևանի պետական համալսարաններում միգրացիոն հետազոտությունների կենտրոնների ստեղծումը, ինչպես նաև տարածաշրջանային հետազոտական ցանցի ձևավորումը, որոնք պետք է ապահովեն համագործակցությունը տարածաշրջանում գործող և միգրացիոն հիմնախնդիրներով զբաղվող կառույցների միջև: Այդ խնդրի լուծման նպատակով միգրացիոն հետազոտությունների կենտրոններին կից ստեղծվել է նաև միգրացիոն հետազոտությունների տարածաշրջանային առցանց հարթակ, որը.

ա) աջակցում է միգրացիոն հետազոտությունների մագիստրոսական ծրագրերում ներառված ուսանողներին՝ տրամադրելով անհրաժեշտ գրականություն և տվյալներ,

բ) ապահովում է առցանց ուսուցում: Բացի այդ, հարթակն օգտագործվել է ուսումնական ծրագրերի, մասնագիտական հրատարակումների և վիճակագրական տվյալների փոխանակման, ինչպես նաև միգրացիոն հետազոտությունների կենտրոնների տվյալների՝ լայն շրջանակներին ներկայացնելու համար, տես՝ մանրամասն՝ <http://www.wus-austria.org/19/projects/91/unimig--migration-and-higher-education--building-skills-and-capacities>):



«TEMPUS IV UNIMIG» համագործակցային ծրագրի մասնակիցների հանդիպումը Թբիլիսիի պետական համալսարանում, 2012 թ., ապրիլ

sity) and a Regional Research Network that serves as an interface among universities, research and public institutions, governments and society. The Regional Online Platform on Migration, maintained and updated by the MCCs, is another important project output. It supports MA students by providing (a) literature and data for research purposes and (b) an e-Learning component. The platform is widely used to disseminate the curriculum, publications, statistical data and other materials produced by the MCCs amongst the wider public (migration officials, journalists, researchers, public institutions, civil society, see more on <http://www.wus-austria.org/19/projects/91/unimig--migration-and-higher-education--building-skills-and-capacities>).

Project activities included workshops at the Tbilisi State University, at the University of Oldenburg, the University of Alicante and the Yerevan State University.

Joint project activities under the TEMPUS IV UNIMIG made an essential input to the establishment and development of the Migration Competence Center at the YSU Faculty of Sociology. In particular, on 29-30 October 2012, the MCC staff participat-

TEMPUS IV UNIMIG consortium meeting at the Tbilisi State University, April 2012



Ծրագրի իրականացումը ներառել է նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումներ Թբիլիսիի, Երևանի, Օլդենբուրգի, Ալիկանտեի համալսարաններում:

«TEMPUS IV UNIMIG» համագործակցային ծրագիրն էապես նպաստեց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը: Մասնավորապես, 2012թ. հոկտեմբերի 29-30-ին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի մասնագետներն այցելեցին Ավստրիայի Գրացի համալսարանի մարդու իրավունքների և ժողովրդավարության եվրոպական հետազոտությունների կենտրոն:



Համագործակցային ծրագրի մասնակից երկրների (Վրաստան, Հայաստան, Գերմանիա և Ավստրիա) ներկայացուցիչները ԵՊՀ-ում, 2014 թ., ապրիլ
Representatives of the consortium universities (Georgia, Armenia, Germany and Austria) at YSU, April 2014

Այցի նպատակն էր ԵՊՀ մասնագետներին համապատասխան հետազոտական կենտրոնների գործունեության մեթոդաբանության և փորձի փոխանցումը:

2012 թ. նոյեմբերի 5-9-ը ԵՊՀ-ում կազմակերպվեց վերապատրաստման դասընթաց՝ հեռահար կրթության կազմակերպման թեմայով, որի ընթացքում ԵՊՀ մասնակիցները, այդ թվում՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի աշխատակիցները, ԵՊՀ գրադարանի և տեղեկատվական կենտրոնի ներկայացուցիչները, սովորեցին դասավանդման ընթացքում կիրառել հեռաուսուցման «Moodle» և «Greenstone» ծրագրային հնարավորությունները:

ed in a UNIMIG Study Visit to the European Training and Research Centre for Human Rights and Democracy at the University of Graz. The main objective of the study visit was to get an insight into the working methods of specialized competence centers integrated into higher education institutions. The participants became acquainted with the operation of three competence centers at the University of Graz, where they learned about the working structures, methodology and visions of the centers.

On 5-9 November 2012, a national training session took place at YSU. Its purpose was to improve participants' skills and capacity in e-learning using the Moodle Platform and the Greenstone digital library software. The training was attended by the staff of the MCC, the YSU library and IT center. YSU staff was trained in data collection, data analysis and preparation, assembling of factsheets and national reports, contributing national information to the RRN, provision of services for researchers, participation in research networks and bringing forth the RRN, development of management and business plans ensuring the financial sustainability of the centers and their staff.

In collaboration with partners, YSU established an online platform, purchased equipment and trained its staff. The website designer created the platform using open-source software. The platform combines the project website with the research database of the MCCs and a password-secured e-Learning and e-conferencing area for the Master programs. YSU assigned IT staff to support the online platform and its e-Learning component; support capacity building of its IT, MCC and teaching staff (involved in Master programs on Migration) in usage of the online platform. YSU assures the dissemination of the online platform throughout the institution.



Մասնակիցները սովորեցին հավաքագրել, մշակել և վերլուծել մեծածավալ տեղեկատվություն, այն տարածել առցանց հարթակում և այլն:

Համագործակցային ծրագրի շրջանակներում Սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնը ստեղծեց իր առցանց հարթակը, որի միջոցով հնարավոր դարձավ հավաքագրելու և տարածելու մասնագիտական գրականություն և հետազոտական տվյալներ, ապահովելու հեռացանց ուսուցման առանձին բաղադրատարրեր: ԵՊՀ-ի կողմից այդ հարթակի կիրառումը ավելի լայն շրջանակներ ունեցավ:

«ERASMUS+ PROMIG» (Միգրացիոն հետազոտությունների խթանումը բարձրագույն կրթության ոլորտում, 2016-2020)

Միգրացիոն հետազոտությունների խթանումը բարձրագույն կրթության ոլորտում («ERASMUS+ PROMIG», 2016-2020) ընթացիկ համագործակցային ծրագրի շրջանակներում Սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի միգրացիոն հետազոտությունների բաղադրիչն էապես կատարելագործվեց և տարածում ստացավ ինչպես հայաստանյան, այնպես էլ ծրագրի գործընկեր մյուս համալսարանների շրջանակներում: Ինչպես նախորդ ծրագրում, այնպես էլ այս անգամ միջբուհական համագործակցությունը ներառել է մասնակից բուհերի դասախոսական կազմն ու ուսանողությանը, խթանել ակադեմիական մոբիլությունը, հրավիրյալ դասախոսների աշխատանքը, փորձի և ձեռքբերումների փոխանակումը Թբիլիսիի (Վրաստան), Երևանի (ՀՀ), Ալիկանտեի (Իսպանիա), Գրացի (Ավստրիա), Օլդենբուրգի (Գերմանիա), Հայ-նուսական (ՀՀ) և մյուս համալսարանների միջև: Այս ծրագիրն իր նպատակներով և ներուժով հենվել է նախորդ «TEMPUS» ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված համագործակցային փորձի վրա, կատարելագործել է արդեն առկա համագործակցության ցանցային հնարավորությունները, օգտագործել է մասնակից բուհերի փոխադարձ վստահությունն ու առկա համատեղ ձեռքբերումները, moodle հարթակի կիրառման հնարավորությունները և այլն:

ERASMUS+ PROMIG (Promoting Migration Studies in Higher Education, 2016-2020)

Under the ongoing joint project Promoting Migration Studies in Higher Education (ERASMUS+ PROMIG, 2016-2020), teaching curricula on Migration Studies has been essentially strengthened. The efforts of the faculty concentrated on integration of teaching and research activities on migration issues in the national as well as transnational context. The project unifies university teachers and students from the EU and the European neighborhood countries, represented by Tbilisi State University, Yerevan State University, University of Graz (Austria), University of Alicante (Spain), University of Oldenburg (Germany), Armenian-Russian University and some other universities in the region. The project has been based on the already well established good practice of consortium member institutions working together in prior EC funded project under TEMPUS Program, which aimed at developing curriculum in migration studies for 6 universities in South Caucasus region, establishing migration competence centers, and developing the regional research network using the Moodle platform as a flexible tool for strengthening good practice of experience exchange within the network of academics from the universities in the region.

Following the success of the TEMPUS project, the consortium member institutions decided to expand the geographical area of their activities and bring their experience and good practice of positive changes to the level of internationalization of higher educational institutions and building capacities in Afghanistan for Kabul and Tabesh Universities. In the process, the consortium enhanced curriculum development, deepened international relations capacity, improved the quality of education and teaching by adding migration-related challenges faced by Afghanistan into the curricula of partner country institutions and vice versa.



«TEMPUS» ծրագրի շրջանակներում ԵՄ և Հարավային Կովկասի տարածաշրջանի բուհերի միջև համագործակցությունն արդյունավետ էր ու հեռանկարային, դրանից ելնելով մասնակիցները նոր՝ «ERASMUS+ PROMIG» ծրագրի շրջանակներում որոշեցին ընդլայնել համագործակցային ցանցն ու դրանում ներառել Աֆղանստանի երկու՝ Քաբուլի և Թաքեշի համալսարանները: Սա հավանաբար առաջին և բացառիկ փորձ էր՝ փոխանցելու ԵՄ և Հարավային Կովկասի բուհերի միասնական գործունեության արդյունքում մշակված կրթական ծրագրերի արդյունավետ օրինակներն ու համագործակցության մեթոդաբանությունը միգրացիոն հետազոտությունների ոլորտում Աֆղանստանի բուհերին: Որպես արդյունք՝ գործընկեր համալսարաններն ապահովեցին Աֆղանստանի մասնակից բուհերում միգրացիոն հետազոտություններին նվիրված կրթական մոդուլների մշակումը, փոխանցեցին ուսումնական ծրագրերի և դասընթացների մշակման իրենց փորձը, իրականացրին համատեղ քննարկումներ, այդ թվում՝ առցանց եղանակով: Բացի այդ՝ գործընկեր համալսարանների մասնագետները կարողացան անմիջապես տեղեկատվություն ստանալ Աֆղանստանում տեղի ունեցող միգրացիոն գործընթացների և միգրացիոն քաղաքականության մասին: Համագործակցությունն իրականացվել է մասնակից բուհերի ինստիտուցիոնալ ռազմավարական ծրագրերին և զարգացման հեռանկարներին համահունչ:

Առաջին փուլում Աֆղանստանի երկու բուհերում ստեղծվեցին միգրացիոն հետազոտությունների կենտրոններ, որոնք իրենց հերթին պետք է ապահովեին մագիստրոսական ծրագրերում միգրացիոն հետազոտությունների դասավանդման կրթական մոդուլներ: Լինելով Թբիլիսիի պետական համալսարանի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի (իրավ. գիտ. թեկնածու Նինո Պարսադանիշվիլի) նախաձեռնության արդյունքը՝ այս նախագիծը կամրջեց Եվրոպան, Հարավային Կովկասն ու Արևելքը կրթական գործընթացների և միգրացիոն հետազոտությունների համատեքստում:

Համագործակցային ծրագրի նպատակներից էր մասնակից հաստատությունների դասախոսների և ուսանողների մշտական հաղորդակցության ապահովումը, փորձի և գաղափարների փոխանակումը, ինչպես նաև այդ հաստատություններում իրականացվող միգրացիոն հիմնախնդիրների ուսումնասիրման արդյունավետության բարձրացումը ստացվող գիտական արդյունքների՝ միմյանց համար տեսանելի դարձնելու միջոցով:

These goals were designed in full compliance with the regional and national priorities of partner institutions, including the Faculty of Sociology of Yerevan State University.

The specific objective of the project was to launch the MA program in Migration Studies at two universities in Afghanistan. In order to guarantee the effective administration of the MA program in Migration Studies, the project established a Migration Competence Centre as a cooperation hub for academic, research and public institutions in the country and on international level. Resulting from the idea of Dr. Nino Parsadanishvili (Migration Competence Center Head at Tbilisi State University), this initiative bridged Europe with Asia and created a platform for exchange of information and joint efforts in the field of teaching and studying migration issues.

One of the aims of the project was to promote academic discussion and to increase the visibility of migration-related research and education amongst representatives of diverse MA programs. Three summer/winter schools for students held in Tbilisi (summer school in Georgia, 2018), in Alicante (summer school in Spain, 2019) and in Delhi (winter school in India, 2020) have contributed to this important aim.



Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Ավետիսյանը դասախոսում է Ալիկանտեի համալսարանում կազմակերպված ամառային դպրոցում, 2019 թ., մայիս
Dr. Aleksandr Avetisyan (YSU Faculty of Sociology) delivers his lecture at the Summer School in Alicante, Spain (May 2019)



Այդ նպատակով գործընկեր համալսարանների ուսանողների համար կազմակերպվել են ամառային/ձմեռային դպրոցներ. ամառային դպրոցներ՝ Վրաստանում (Թբիլիսի, 2018), Իսպանիայում (Ալիկանտե, 2019) և ձմեռային դպրոց՝ Հնդկաստանում (Դելի, 2020):

Կազմակերպված ամառային/ձմեռային դպրոցներին մասնակցած մոտ 60 ուսանող և ասպիրանտ գործընկեր համալսարաններից ստացան լրացուցիչ գիտելիքներ, շրջագայեցին, շփվեցին, ձեռք բերեցին նոր ծանոթություններ, մասնակցեցին համատեղ կրթական միջոցառումներին և ձեռք բերեցին կարևոր մասնագիտական փորձ:

«ERASMUS+ PROMIG» ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվել է հրավիրյալ դասախոսների դասավանդումը, ինչպես նաև վերամշակվել և կատարելագործվել են միգրացիոն հետազոտություններին նվիրված կրթական ծրագրեր (ավելի մանրամասն՝ <http://promig.tsu.edu.ge/pages/1/about-the-project>):

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի գործունեությունը

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է 2011 թ. ԵՄ «TEMPUS IV UNIMIG» ծրագրի շրջանակներում՝ ծրագրում ներառված համալսարանների, այդ թվում՝ Թբիլիսիի, Ալիկանտեի, Օլդենբուրգի, Գրացի, Ռուս-հայկական համալսարանների համագործակցությամբ (<http://www.mcc.ysu.am>): ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետին կից միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնի ստեղծումը պայմանավորված էր Հայաստանում սոցիալական կարևորագույն խնդիրներից մեկի՝ միգրացիայի ուսումնասիրության հրատապությամբ:

Միգրացիոն գործընթացներն իրենց երբեմն դրական, իսկ երկարաժամկետ հեռանկարում հիմնականում բացասական հետևանքներն ունեցան և շարունակում են ունենալ հայկական սոցիալական իրականության բոլոր մակարդակներում՝ առանձին քաղաքացու կենցաղից մինչև արտաքին քաղաքականություն:

A total of over 60 students involved in migration studies from the participating universities attended the schools and received classes from local and visiting professors, participated in the workshops and group work, got new experience, traveled, and established new professional and personal contacts.

In the framework of the ERASMUS+ PROMIG project, visiting professors from the consortium universities continued delivering classes to the students involved in migration studies programs at the partner universities. The project results included reviewed curricula in migration studies, additional resources and joint efforts devoted to migration studies and research activities at the partner universities (see more at <http://promig.tsu.edu.ge/pages/1/about-the-project>).

Mission of the Migration Competence Center at the Faculty of Sociology, YSU

The Migration Competence Center (MCC) was established in 2011 at the YSU Faculty of Sociology under the EU TEMPUS IV UNIMIG joint project, in cooperation with the Tbilisi State University, the University of Graz (Austria), the University of Alicante (Spain), the University of Oldenburg (Germany), the Armenian-Russian University and other partners (<http://www.mcc.ysu.am>).



Ամառային դպրոցի մասնակիցները Թբիլիսիում,
2018 թ., հուլիս
Summer school participants in Tbilisi, July 2018



Այսպես, հետխորհրդային Հայաստանի միգրացիոն բացասական հետևանքներից է ՀՀ բնակչության վերարտադրողական ռեժիմի ձևախեղումը, տնտեսապես ակտիվ բնակչության կրիտիկական նվազումը, գյուղերի բնաթափումը, հասարակական կառուցվածքի անցանկալի այլափոխումը, որակավորված մասնագետների արտահոսքը, ինչը հետագայում կարող է բերել տնտեսական առանձին ոլորտների խորին ճգնաժամի:

Ստեղծված պայմաններում միգրացիան ունեցավ նաև կարևորագույն դրական արդյունք, այն է՝ արտասահմանյան դրամական փոխանցումները, որոնք հնարավորություն տվեցին հազարավոր ընտանիքների հաղթահարել տնտեսական անկումը, վերականգնել, գրոյից հիմնել առանձին ենթակառուցվածքներ, սկիզբ դնել մի շարք տնտեսական հարաբերությունների:

Կենտրոնի ստեղծումը համահունչ է միջազգային կոնվենցիաների, պայմանավորվածությունների, համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորություններին, որոնց առանձին դրույթները հենք են անկանոն միգրացիայի կարգավորմանն ու բացասական հետևանքների հաղթահարմանն ուղղված ՀՀ միգրացիոն հայեցակարգի, միգրացիոն օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, պետական որոշումների համար:



«ERASMUS+ PROMIG» համագործակցային ծրագրի մասնակիցների աշխատանքային հանդիպումը Թբիլիսիի պետական համալսարանում, 2019 թ., նոյեմբեր

The need for the establishment of the Center stemmed from migration problems around the world in general and the Eurasian region in particular. Accordingly, integration of migration studies into research and teaching at YSU became the main mission of the MCC during the EU TEMPUS UNIMIG and subsequent projects.

With Armenia as its research focus, the MCC is concentrated on issues that are topical for Armenia, the region and the world, such as internal migration, permanent migration, short- and long-term labor migration, trade migration, shuttle migration, irregular migration, trafficking victims, immigration, asylum seekers, return migrants, repatriates, re-emigration, environmental migration and refugees.

Although a considerable amount of research aimed at revealing various aspects and problems of migration has been conducted since the mid-1990s by various organizations, more research needs to be done on ways to regulate the current situation with migration in Armenia.

ERASMUS+ PROMIG consortium meeting at Tbilisi State University, November 2019

Կենտրոնի ստեղծումը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ վերջինս միգրացիայի ուսումնասիրության բնագավառում ունի տասնյակ տարիների առաջնակարգ փորձ և մասնագիտացված գիտական ներուժ, ինչի վկայությունն են ֆակուլտետի մասնագետների կողմից միջազգային կառույցների, տեղական և արտասահմանյան դրամաշնորհների աջակցությամբ իրականացվող բազմաթիվ միգրացիոն ուսումնասիրությունները, ծրագրերը, ֆակուլտետում շարունակաբար դասավանդվող առարկաներն ու ղեկավարվող հետազոտական թեմաները, ուսումնաարտադրական պրակտիկաները, ատենախոսությունները, արտասահմանյան և հայրենական պարբերականներում լույս տեսնող թեմատիկ հոդվածները, հաշվետվությունները, մասնակցությունները գիտական կոնֆերանսներին:

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են.

- Տեղեկատվական առցանց հարթակի ստեղծումը՝ ուղղված միգրացիայի բնագավառում գիտահետազոտական կենտրոնների և մասնագետների միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը և խթանմանը:
- Գիտական և հետազոտական գրականության, աշխարհում և տարածաշրջանում միգրացիոն գործընթացի վիճակի մասին արդիականացվող տվյալների, այդ բնագավառում իրականացվող մասնագիտական գործունեության մասին տեղեկությունների տրամադրումը ՀՀ մասնագիտական հանրությանը:



ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնի գործունեության ներկայացումը EXPO-2014 շրջանակներում, Երևան

A comprehensive picture of migration in Armenia is also still lacking. The establishment of the MCC at YSU and its further work serves to fill these gaps. The MCC also contributes to the fulfillment of Armenia's commitments under international conventions, agreements and regulations. The operation of the MCC at the YSU Faculty of Sociology relies on the fact that the faculty with its academic and research staff has several decades' extensive and advanced

experience in the field of migration studies and has made its contribution to domestic and international projects.

The activities of the MCC include the following:

- Creation of an online platform to provide and trigger productive collaboration amongst research centers and specialists in the field of migration studies in the world, with a database of recent migration studies, domestic and joint projects;
- Creation of a legal database on migration policies and regulations;
- Provision of scientific and research materials, literature and up-to-date information concerning migration in the region to support migration studies and research;
- Ongoing monitoring and prognosis;

Presentation of the MCC activities during EXPO-2014 in Yerevan, Armenia



- Միգրացիոն իրավիճակի շարունակական մոնիթորինգի ապահովումը և կանխատեսումը:
- Գիտական ուսումնասիրությունների իրականացումը:
- Առաջատար արտասահմանյան կենտրոնների նորագույն գիտական, հետազոտական նվաճումների և փորձի ներթերումը հայաստանյան միգրացիոն իրականության բազմակողմանի, հեռանկարային ուսումնասիրությունների գործընթացում:
- Սեմինարների, կլոր սեղանների, քննարկումների, թրեյնինգների, դասընթացների կազմակերպումը:

Միգրացիոն հետազոտությունների կենտրոնը նաև նպաստում է ֆակուլտետում միգրացիոն հետազոտությունների մոդուլների ներառմամբ կրթությանը:

Սոցիալական անվտանգություն և միգրացիոն քաղաքականություն մագիստրոսական ծրագրի մշակումը ԵՄ աջակցությամբ իրականացված ծրագրերի շրջանակներում

Կոնֆլիկտաբանության մագիստրոսական ծրագիրը ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնում ստեղծվել է 1999 թ. ԱՄՆ Զորջ Մեյսոն համալսարանի հետ համագործակցությամբ: Այնուհետև, կոնֆլիկտաբանության կրթական մոդուլը ներառվեց նաև Սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի ծրագրում:

2011 թ. ԵՄ «TEMPUS IV» գործընկերային ծրագրի շրջանակներում սոցիոլոգիայի ֆակուլտետը նպատակ դրեց ներառելու միգրացիոն հետազոտությունների կրթական մոդուլը կոնֆլիկտաբանության գործող մագիստրոսական ծրագրում: ԵՄ գործընկեր համալսարանների հետ համատեղ մշակվեցին և ներդրվեցին նոր առարկաներ:

Կրթական ծրագրի և առարկաների մշակումն ու զարգացումը շարունակվեց «ERASMUS+ UNIMIG» դրամաշնորհի միջոցով՝ ներդնելով միգրացիոն հետազոտություններին նվիրված արդիական կրթական մոդուլներ, վերապատրաստելով դասախոսական կազմին: Մշտապես իրականացվել է նաև կրթական ծրագրի որակի արտաքին և ներքին գնահատումը:

- Implementation of national and international research projects and activities, organization of conferences and seminars;
- Development and approbation of relevant research methodology in the field of migration studies;
- Expertise of migration policies and projects.

The MCC also supports the graduate program in Migration and Conflict Studies at the Faculty of Sociology of Yerevan State University.

Development of the graduate program in Social Security and Migration Policy within EU-funded projects

Established in collaboration with George Mason University, Washington D.C., USA, the Sociology/Conflict Studies program at YSU Department of Sociology was the first in its field in the South Caucasus. Conflict Studies are taught at BA and MA levels. Since 1999, the Department of Sociology has offered a BA program in Sociology with specialization in Conflict Studies and an MA program in Conflict Studies.

In 2011, in the framework of the EU TEMPUS IV joint project, the Department of Sociology incorporated Migration Studies into its graduate program in Conflict Studies, combining both directions in a synchronized and modern graduate program.

The progress of curricula development and syllabus design continued during ERASMUS+ UNIMIG, when new teaching modules were established and innovative teaching methodology applied. The graduate program underwent internal and external evaluation.



«Սոցիալական անվտանգություն և միգրացիոն քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդվում են այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ կոնֆլիկտների վերլուծությունն ու լուծումը, կոնֆլիկտների կառավարումը, միջազգային բանակցություններ, կոնֆլիկտն ու հաղորդակցությունները, խաղաղության հետազոտություններ, անվտանգության տեսություններ: Միգրացիոն հետազոտություններին վերաբերող կրթական մոդուլում ներառվել են մի շարք առարկաներ, այդ թվում՝ միգրացիան և մուլտիկուլտուրալիզմը, միգրացիան և փոքր ազգերը, միգրացիայի գենդերային չափումը, տարածաշրջանային միգրացիան, միգրացիոն քաղաքականությունը, միգրացիան և անվտանգությունը: Ծրագրում տարեկան ներառվում է 8-12 ուսանող, որոնք հետագայում շարունակում են կրթությունը Հայաստանի և արտերկրի ասպիրանտուրաներում, իրականացնում պրակտիկ գործունեություն և ընդգրկվում ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտների ցանցում:



Courses taught at the graduate program in Migration and Conflict Studies include basic courses in *Conflict Analysis and Resolution, Conflict Management, International Negotiations, and Peace Studies*. Specialized courses include *Conflict and Communications, Theories of Nationalism, Regional Conflicts in South Caucasus, and Security Studies*. Specialization in Migration Studies includes courses on *Migration and Multiculturalism, Gender and Migration, Migration and Small Nations, Regional Migration History, Migration Policies, Migration and Security*. Eight to twelve students graduate every year and either continue their studies in Armenia or abroad, or get involved in practical work, becoming part of the network of graduates of the YSU Faculty of Sociology.





Ով ենք մենք

Մեր պատմությունը

1980

Կիրառական սոցիոլոգիայի
լաբորատորիայի
հիմնադրում

The Laboratory of Applied
Sociology established

1986

Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի
ստեղծում Փիլիսոփայության և
սոցիոլոգիայի ֆակուլտետի կազմում

The Chair of Applied Sociology
established within the Faculty of
Philosophy and Sociology

Who we are

Our history

2004

Սոցիոլոգիայի ֆակուլտետի
հիմնադրում

The Faculty of Sociology
established





Մեր առաքելությունը

Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժամանակակից մրցունակ մասնագետների թողարկմանը, որոնք առաջնորդելու են հասարակական կյանքի բոլոր բնագավառներում առաջացող հիմնախնդիրների բացահայտման, կանխատեսման, ակտորոշման և լուծման գործընթացները:

Մեր ֆակուլտետի կառուցվածքը

- Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն
- Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն
- Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոն
- Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն
- Հեռուստուցման լաբորատորիա
- Կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիա
- Տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոն



Our Mission

The mission of the faculty is to train modern competitive professionals who will lead in revealing, predicting, diagnosing and solving problems in various spheres of social life.

Our structure

- Chair of Applied Sociology
- Chair of Theory and History of Sociology
- Chair of Social Work and Social Technologies
- Migration Competence Center
- Center for Regional Integration and Conflict Analysis
- Research Laboratory of Applied Sociology
- Distance Learning Laboratory



Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն

Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնը կազմավորվել է 1986 թ. ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի հիման վրա, որը ԵՊՀ-ում գործում էր 1980 թվականից:

Ամբիոնն իրականացնում է բազմաբնույթ հետազոտություններ քաղաքական, տնտեսական, ռազմական, հաղորդակցությունների և ԶԼՄ սոցիոլոգիայի բնագավառներում, ինչպես նաև անվտանգային, գենդերային և միգրացիոն հիմնախնդիրների ուսումնասիրություններ: Այն ակտիվորեն համագործակցում է պետական և հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնում բազմաբնույթ սոցիոլոգիական հետազոտություններ, քաղաքական կառավարման գնահատում և խորհրդատվություն:

Հեռ.՝ (+374 60) 71 00 74



Chair of Applied Sociology

The Chair of Applied Sociology was founded in 1986 on the basis of the Laboratory of Applied Sociology which had been functioning at YSU since 1980.

The chair conducts research projects in the spheres of political, economic, military, communication and media sociology as well as in gender, security and migration studies. It actively cooperates with governmental and non-governmental organizations, conducts various sociological studies, political governance assessments and consultancy.

Tel: (+374 60) 71 00 74



Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն

Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հիմնադրվել է 2004 թ.: Ներկայումս ամբիոնը պատրաստում է առաջատար սոցիալական աշխատողներ, սոցիալական կառավարման և հասարակայնության հետ կապերի մասնագետներ:

Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնն արտերկրի իր գործընկերների հետ պարբերաբար կազմակերպում է հրավիրյալ դասախոսություններ և գիտաժողովներ, այդ թվում՝ Սոցիալական աշխատողների տարեկան միջազգային համաժողովը: Ամբիոնն իրականացնում է համատեղ ուսումնական ծրագրեր Կոնեկտիկուտի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի (ԱՄՆ), Ստավանգերի սոցիալական աշխատանքի համալսարանի (Նորվեգիա), Մյունստերի կիրառական գիտությունների կաթոլիկ համալսարանի (Գերմանիա), Հրադեկ Կրալովե համալսարանի (Չեխիա) հետ:

Հեռ.՝ (+374 60) 71 00 75



Chair of Social Work and Social Technologies

The Chair of Social Work and Social Technologies was founded in 2004. Nowadays the Chair trains leading social workers, social management and PR specialists.

In cooperation with its international partners the chair frequently organizes invited lectures and conferences including the Annual International Congress of Social Workers. The Chair implements joint educational programs with the Connecticut School of Social Work (USA), the Stavanger University of Social Work (Norway), the Catholic University of Applied Sciences (Germany) and the University of Hradec Králové (Czech Republic).

Tel: (+374 60) 71 00 75



Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոն

ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնը կազմավորվել է 2011 թ.: Այդ պահից սկսած ամբիոնն իրականացրել է հայաստանյան հասարակական կյանքի տարբեր ոլորտների հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուղղված բազմաթիվ նախագծեր՝ որպես ելք ունենալով նաև պրակտիկ բնույթի առաջարկներ:

Ամբիոնի գիտական և ուսումնական գործունեության հիմնական ուղղություններն են սոցիոլոգիական տեսությունները, սոցիոլոգիայի պատմությունը, տնտեսական սոցիոլոգիան, աշխատանքի սոցիոլոգիան, կրոնի սոցիոլոգիան, կառավարման սոցիոլոգիան և այլն: Ամբիոնը միջազգային մակարդակում համագործակցում է տարբեր գիտակրթական հաստատությունների հետ:

Հեռ.՝ (+374 60) 71 00 21



Chair of Theory and History of Sociology

